

Հաշվետվություն

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմաաշխարհագրական ֆակուլտետի 2018թ. կատարած աշխատանքների.

Պատմաաշխարհագրական ֆակուլտետը կրթական, գիտական, ուսումնադաստիարակչական գործունեություն իրականացնող ստորաբաժանում է, որտեղ կրթական գործունեություն է իրականացվում բակալավրի որակավորմամբ 6 և մագիստրոսական 2 մասնագիտությունների գծով.

- Պատմություն (առկա, հեռակա)
- Իրավագիտություն (առկա, հեռակա)
- Կառավարում (առկա, հեռակա)
- Աշխարհագրություն (հեռակա)
- Սոցիալական աշխատանք (առկա)
- Մերվիս (առկա)

Մագիստրոսական կրթություն`

- Հանրային կառավարում (առկա)
- Պատմություն (առկա);

Առ 1-ը նոյեմբերի 2018 թ. պատմաաշխարհագրական ֆակուլտետի առկա և հեռակա բաժիններում սովորում են 495 ուսանողներ, որոնցից 22-ը մագիստրոսական կրթության համակարգում: Առկա բաժնի 55, իսկ հեռակա բաժնի 2 ուսանող սովորում են անվճար համակարգում:

Եթե 2018-19 թթ. տվյալները համադրում ենք նախորդ տարիների տվյալների հետ, տեսնում ենք, որ բոլոր մասնագիտությունների գծով ուսանողների թիվը կրճատվել է:

Այս բացասական միտումն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Այն ինչ-որ տեղ պայմանավորված է նաև մեր կողմից իրականացվող բուհ-դպրոց կապի անարդյունավետ աշխատանքով:

Ֆակուլտետի հիմնական ամբիոնները երեքն են.

1. «Պատմության»
2. «Տնտեսագիտության տեսության և տնտեսական աշխարհագրության»
3. «Փիլիսոփայության և քաղաքագիտության»:

Ֆիզիկական աշխարհագրության ուղղության առարկաների ծանրաբեռնավածություններն ամրագրված են բուսաբանության և աշխարհագրության ամբիոնում:

Ընդհանուր առմամբ` հիմնական ամբիոններում ուսումնական բեռնվածությունը կատարում են 49 դասախոսներ:

Ամբիոնները լուրջ աշխատանք պետք է կատարեն սերնդափոխության, երիտասարդ դասախոսների մասնագիտական և մեթոդական առաջընթացի ուղղությամբ: Հիմնական դասախոսական համակարգի 49 հոգուց 18-ի տարիքը բարձր է 50-ից, իսկ դրանցից 14-ինը` 60-ից: Այսպես` «Կառավարում» մասնագիտության բաժնի հիմնական առարկաներ դասավանդող դասախոսների զգալի մասը համատեղողներ են, որոնք հիմնական դրույքի անցնելու նպատակ չունեն, քանի որ ապահովված են այլ աշխատանքով:

Հաշվետու ժամանակաշրջանում դեկանատի աշխատանքային գործունեությունն իրականացվել է համալսարանի, ֆակուլտետի և ամբիոնների կանոնադրությունների պահանջներին համապատասխան: Դեկանատը (ֆակուլտետը) հիմնականում գործել է նախօրոք հաստատված աշխատանքային պլանով:

Քննարկվել և հաստատվել են 2018-19 ուս. տարվա ֆակուլտետի աշխատանքային պլանները, դասախոսների օրացույցային պլանները, առկա ուսուցման համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտաճառերի թեմաները, միջանկյալ քննությունների գրաֆիկները, ամփոփվել են քննաշրջանների, ավարտական ատեստավորման քննությունների արդյունքներն ու քննարկվել հաջորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքներին վերաբերող հարցերը, ամփոփվել են տեղեկագրերում տեղ գտած և ստուգող հանձնաժողովի կողմից հայտնաբերված սխալներն ու ջնջումները: Ֆակուլտետում կառավարման ապակենտրոնացման թափանցիկության և պատասխանատվության դերի բարձրացման նպատակով վերջին ժամանակներս ուսումնամեթոդական խորհրդի մի քանի նիստ անց է կացվել ընդլայնված ձևաչափով:

Նիստերում բազմիցս քննարկումներ են եղել աշխատանքային կարգապահության խնդիրների և բարելավման ուղիների, հերթապահության կազմակերպման (այս հարցում ոչ մի դրական տեղաշարժ չի նկատվել), դասի գործընթացի արդյունավետ կազմակերպման և խթանման, ակադեմիական խմբերի խորհրդատուների աշխատանքներին առնչվող խնդիրների և միջոցների, կաբինետների աշխատանքների արդյունավետության բարձրացման հետ կապված հարցերի շուրջ:

Մատենավարության հարցը մշտապես գտնվել է մեր ուշադրության կենտրոնում: Այստեղ առկա թերությունները նախորդ տարիների համեմատ փոքր-ինչ բարելավվել են: Մա, մեր կարծիքով, գործընթաց է, որն ապահովում է ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունն ու նրանց միջև առողջ մրցակցության ապահովումը (ի նկատի ունենք փոխատեղումը): Պատահական չէ, որ այս հարցին հաճախակի են անդրադառնում ռեկտորատն ու ուսումնական մասը: Այնուամենայնիվ, այս ուղղությամբ որոշակի թերություններ դեռևս գոյություն ունեն: Ոչ բոլոր դասախոսներն են սեմինար և գործնական պարապմունքների գնահատականները ժամանակին անցկացնում մատյաններում: Առաջին հայացքից սա կարող է մանրուք երևալ, սակայն իրականում մեծ բացթողում է: Դասախոսները թերանում են նաև մատյաններում բացակայությունները նշելու հարցում:

Ֆակուլտետում աստիճանաբար աշխուժացում է նկատվում անհատական և ինքնուրույն աշխատանքների կազմակերպման գործում: Հարկ է նշել, որ շատ դասախոսների մոտ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման միակ ձևը մնում է ռեֆերատը:

Որոշակիորեն փոխվել է վերաբերմունքն արտադրական պրակտիկայի նկատմամբ: Այն, որպես ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչ, միշտ եղել և մնում է դեկանատի աշխատանքային գործընթացի հիմնական մասը: Պրակտիկաների արդյունավետ կազմակերպման համար մշտապես համագործակցել ենք ուսումնական մասի, պրակտիկայի բաժնի և համապատասխան դպրոցների ու կազմակերպությունների տնօրինությունների և մանկավարժական կոլեկտիվների հետ:

Որպես կանոն՝ արտադրական պրակտիկայից առաջ ուսումնական վարչության նախաձեռնությամբ կազմակերպում ենք խորհրդակցություններ համապատասխան կուրսերի

ուսանողների և մեթոդիստների հետ: Հաճելի է, որ ուսանողության մեծ մասը վերջին տարիներին մանկավարժական պրակտիկային մասնակցում են ակտիվորեն, հաճույքով: Այս կապակցությամբ դրական տեղաշարժն ակնհայտ է, բայց անելիքներ նույնպես շատ կան: Ամբիոնները պրակտիկայի վերահսկողության գործում հետևողական չեն: Ամբիոնի վարիչները չեն հաճախում դպրոցներ:

Թերի անցկացրած պրակտիկաներն անպայմանորեն լրացվում են ՎՊՀ հենակետային վարժարանում: Նման դեպքերն այս տարի փոքր ինչ ավելացել են: Հեռակա ուսուցման հակակարգի տասը ուսանող արդեն իսկ դիմել է պրակտիկայի բացակայությունները լրացնելու համար:

Դեկանատի կողմից ծավալուն աշխատանք է կատարվել ընթացիկ ստուգումների նախապատրաստման և անցկացման ուղղությամբ: Նախքան ընթացիկ ստուգումներ կազմակերպելը՝ հանդիպել ենք բոլոր կուրսերի ավագների հետ՝ ճշտելու դասախոսական տեքստերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հարցաշարերի հետ: Ամբիոնների կողմից կազմվում են հատուկ գրաֆիկներ, ըստ որի, դասախոսն առնվազն 4 անգամ պետք է հանդիպում ունենա անբավարար գնահատական ստացած ուսանողների հետ: 2018-2019 ուս. տարվա առաջին ընթացիկ քննությունների արդյունքում ֆակուլտետի առաջադիմությունը կազմել է 88.2%:

Արդեն ավարտվել են 2017-18 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի ամփոփիչ ատեստավորման քննությունները բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի գծով:

Պետք է նշեմ, որ մագիստրոսական ծրագրերի գծով ավարտական թեզերը պաշտպանվեցին լավ մակարդակով: Հաջողված էին նաև բակալավրի կրթական ծրագրի գծով պաշտպանված ավարտական աշխատանքները: Մակայն պետք է նշել, որ ամբիոնները լուրջ անելիքներ ունեն կապված մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտաճառերի թեմաների ընտրության հետ: Մասնավորապես անհրաժեշտ է, որպեսզի ընտրվեն արդիական և մասնագիտական անհրաժեշտությունից բխող թեմաներ, ճիշտ ներկայացվեն թեմաների գիտահետազոտական խնդիրները, դրանց ուսումնասիրության ոլորտներն ու լուծման ուղիները:

Նույնը չեմ կարող ասել ամփոփիչ ատեստավորման քննությունների կապակցությամբ: Պետք է խոստովանել, որ հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողները ցուցաբերեցին շատ ցածր առաջադիմություն: Սա այն դեպքում, երբ գիտելիքների գնահատման նշաձողը սահմանված էր (ստիպված) խիստ ցածր մակարդակի: Արդյունքում հեռակա ուսուցման համակարգերի շատ շրջանավարտներ չկարողացան այն հաղթահարել և «Իրավագիտություն» մասնագիտությունից 9 ուսանող անբավարար ստացան:

Հաշվի առնելով այս տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքները՝ դեկանատն ու թողարկող ամբիոնները, ինչպես նաև ավարտական կուրսերի ուսանողները անհրաժեշտ հետևություններ պետք է անեն:

Ամբիոններին հանձնարարված է ավելի արդյունավետ կազմակերպել ակնարկային դասախոսություններն ու խորհրդատվական ժամերը: Լուրջ աշխատանք պետք է տարվի հատկապես այն ուսանողների հետ, որոնք նպատակ ունեն 2018-2019 ուստարվա ընթացքում վերահանձնելու ամփոփիչ ատեստավորման քննությունները: Դեկանատը նախատեսել է մարտ-ապրիլ ամիսներին վերջիններիս համար կազմակերպել լրացուցիչ անհատական խորհրդատվական պարապմունքներ:

Ֆակուլտետի նպատակների և խնդիրների, գործունեության պլանավորման և արդյունավետության բարձրացման, ղեկավարման և կառավարման վիճակի վերլուծությունների արդյունքում վեր են հանվել մի շարք թույլ կողմեր: Նախորդ տարվա նման դրանք գրեթե նույնն են: Այսպես, հանրապետական և միջազգային կրթական ծրագրերի մասնակցության նախագծերի բացակայությունը, ռազմավարական խնդիրների և ծրագրերի իրականացման համալիր ֆինանսավորման սահմանափակ հնարավորությունները, պլանների և ծրագրերի կատարման արդյունավետության գնահատման հստակ մշակված տեսական և մեթոդական համակարգի բացակայությունը, դասախոսների և աշխատակիցների կողմից պլանների և ծրագրերի համատեղ իրականացման աշխատաժամանակի ոչ արդյունավետ օգտագործումը և այլն: Բավականին թույլ կողմեր են վերհանվել համապատասխան կրթական ծրագրերի իրականացման, վերլուծության արդյունքում: Շատ ուսանողների կողմից դժգոհություն կա, որ որոշ դասընթացներում նորույթ չկա, դասընթացները հանդիսանում են մեկը մյուսի պարզ կրկնությունը: Գործատուների և շահառուների մշտական կապերի թուլությունը, որոշ մասնագիտությունների գծով՝ մագիստրատուրայի բացակայությունը, ռեսուրսների՝ դեռևս նկատվող սղությունը: Չնայած որոշ աշխուժացումների ինքնուրույն և անհատական պարապմունքների կազմակերպման մակարդակը հեռու է բավարարից, ուսանողական գիտական ընկերության գիտաժողովների կազմակերպման շատ հաճախ ձևական բնույթը, կրթության ուսանողակենտրոն մոդելի ներդրման գործընթացի ոչ բավարար վիճակը և այլն: Այս և նման բոլոր հարցերի աստիճանական վերացման և լուծման կապակցությամբ մշակել ենք համապատասխան ժամանակացույց, և նշվել են պատասխանատու ստորաբաժանումները և անձինք:

Կատարված գիտահետազոտական աշխատանքների մասին մանրամասն հաշվետվություն կտան ամբիոնները Այդ ուղղությամբ մենք վիճակը կներկայացնենք համառոտ ձևով: 2014 թ. պատմության ամբիոնը հրատարակել է 6 հոդված, մեկ մենագրություն, տնտեսագիտության տեսության ամբիոնը՝ 4 հոդված, մեկ ուսումնական ձեռնարկ, փիլիսոփայության և քաղաքագիտության՝ 3 հոդված, 2015թ. պատմության ամբիոնը հրատարակել է 8 հոդված, 2 մենագրություն, տնտեսագիտության տեսության ամբիոնը՝ 7 հոդված, մեկ ուսումնական ձեռնարկ, փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնը՝ 4 հոդված, 2016թ. պատմության ամբիոնը հրատարակել է 3 հոդված, «Տնտեսագիտության տեսության» ամբիոնը՝ 2 հոդված: 2017թ. պատմության ամբիոնը հրատարակել է 13 հոդված, տնտեսագիտության տեսության ամբիոնը՝ 5 հոդված փիլիսոփայության և քաղաքագիտության՝ 3 հոդված, 1 դասագիրք, 1 մեթոդական ձեռնարկ:

2017-2018 ուստարում պատմաաշխարհագրական ֆակուլտետից ՈԻԳԸ նիստերի մասնակցել են. պատմության ամբիոնից՝ 20 ուսանող, տնտեսագիտության տեսության ամբիոնից՝ 6 ուսանող, փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնից՝ 48 ուսանող:

Ֆակուլտետի ՈԱ ապահովման հանձնախմբի, ամբիոնների վարիչների և համալսարանի որակի ապահովման կենտրոնի համագործակցությամբ 2016-2018 թթ. պլանավորված է եղել դասավանդման գործընթացում արդիական, առաջատար մեթոդների և ձևերի ներդրման վիճակի և խնդիրների վերլուծություն և քննարկում:

Այս ուղղությամբ շնորհակալ օգնություն ենք ստացել համալսարանի որակի ապահովման կենտրոնի կողմից, որն էլ դրական ազդեցություն է ունեցել ֆակուլտետի համապատասխան

հանձնախմբի աշխատանքային գործընթացի վրա: Կազմակերպվել են խորհրդակցություններ, քննարկումներ, սակայն պետք է նշեմ, որ նկատվող աշխուժությունը դեռևս ակնկալվող արդյունքները չի տվել: Օրինակ՝ տնտեսագիտության և աշխարհագրության կարիներտի ինտերակտիվ գրատախտակից օգտվել ցանկացողների թիվը շատացել է: Իհարկե, սա դրական շարժ է, սակայն մի մասն այդ գրատախտակն օգտագործում են որպես «ծածկագիր»՝ դասախոսություններ կարդալու համար:

2018 թ. ֆակուլտետի Որակի ապահովման հանձնաժողովն իր առջև խնդիր է դրել իրականացնել կրթական ծառայությունների որակի ուսումնասիրության մշտադիտարկումներ և աուդիտ, վեր հանել ուժեղ և թույլ կողմերը, կատարել համապատասխան վերլուծություններ և իրականացնել բարելավման գործընթացներ: Դրանց արդյունքում վեր են հանվել պատմաաշխարհագրական ֆակուլտետի ուժեղ և թույլ կողմերը, որոնց հիման վրա վերլուծվել են ֆակուլտետի հնարավորություններն ու սպառնացող վտանգները (տես՝ աղյուսակ 1): Վերոհիշյալ թույլ կողմերն ու սպառնալիքները վերացնելու նպատակով կազմակերպվել են նիստեր, քննարկումներ, իրականացվել արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի քաղաքականություն, փորձեր են արվել որակի ապահովման վերլուծության և գնահատման գործիքակազմի բարելավման ուղղությամբ:

Առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների շրջանում պատմաաշխարհագրական ֆակուլտետը յուրաքանչյուր կիսամյակում կատարում է հարցումներ ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր բաղադրիչների, այդ թվում, գնահատման գործընթացների օբյեկտիվության, անցկացման որակի վերաբերյալ: Հարցումների նպատակն է գնահատել ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրերի բովանդակությունից, ուսումնական մեթոդաբանությունից և ուսումնական գործընթացի կազմակերպումից, ինչպես նաև համալսարանի սպասարկումից, վարչական անձնակազմի, դասախոսների աշխատանքից, ուսանողների հետ փոխհարաբերություններից և ուսումնական ռեսուրսներից ու կրթական միջավայրի որակից: Այսպիսով, ֆակուլտետի ՈԱԿ հանձնաժողովը 2016-2017թթ. իրականացրել է հետևյալ աշխատանքները(պատմաաշխարհագրական ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի 2016-17թթ. Աշխատանքային պլանը ներկայացված է աղյուսակ 4-ում)։

1. ՈԱԿ-ը 2016 թ. փետրվարին կատարել է պատմաաշխարհագրական ֆակուլտետի ռազմավարության և տեսլականի, պատմության, փիլիսոփայության և քաղաքագիտության ու տնտեսագիտության տեսության ամբիոնների առաքելության և ռազմավարական պլանների աուդիտ, ներկայացրել ֆակուլտետի հանձնաժողովին իր դիտարկումներն ու առաջարկությունները: Ֆակուլտետի հանձնաժողովը նիստերում քննարկել է այդ առաջարկությունները, հանդիպումներ կազմակերպել ամբիոնների վարիչների, դեկանի հետ, ներկայացրել ՈԱԿ-ին կատարած շտկումները, հանդես եկել առաջարկություններով:
2. Ֆակուլտետի հանձնաժողովը ուշադրություն է դարձրել դասավանդման և ուսումնառության որակի բարձրացման մեխանիզմներին, հետևել ամբիոնների կատարած դասալսումներին և քննարկումներին:
3. Հանձնաժողովը պարբերաբար քննարկումներ է կազմակերպել ԿԾ-ների մշակման, վերանայման վերաբերյալ, կատարել վերլուծություններ: Մասնակցել է ՈԱԿ-ի կողմից

կազմակերպված հանդիպումներին, որոնք վերաբերում էին ԿԾ-ների բաժինների վերլուծություններին. այս ուղղությամբ հանձնաժողովի ախատանքները շարունակվում են:

4. Հանձնաժողովը քննարկել է ուսանողների բարձրացրած հարցերը ինքնուրույն աշխատանքների ծավալի, քանակի վերաբերյալ, պարզաբանել դրանք:
5. Մասնակցել է ՄԿԾ-ների կրթական վերջնարդյունքների գնահատմանը վերաբերող սեմինարին, դրանց վերաբերյալ հանդես եկել ֆակուլտետի դասախոսների շրջանակներում:
6. Ապահովել է առաջին կուրսեցիների մասնակցությունը ՈԱԿ-ի կողմից կազմակերպվող միջոցառումներին, որոնք վերաբերում են ուսանողների իրավունքներին, պարտականություններին, ՎՊՀ կանոնակարգերին:
7. Հանձնաժողովը զբաղվել է ՈԱԿ-ի կողմից հանձնարարված ԱՈԻՓ-ների ուսումնասիրությամբ, պարզաբանել, թե արդյո՞ք ներկայացված ռեուրսները և դասավանդման մեթոդները կիրառվում են դասընթացը վարելիս:
8. Հանձնաժողովը կատարում է շարունակական աշխատանքներ, մասնավորապես, անդամները մասնակցում են իրենց ամբիոնների կողմից սպասարկվող մասնագիտությունների տեղեկագրքերի, ԱՈԻՓ-ների վերանայման, փոփոխման և բարելավման աշխատանքներին:
9. Ֆակուլտետային հանձնաժողովը, համագործակցելով դեկանատի և ամբիոնների հետ, պարբերաբար հանդիպումներ է կազմակերպում ակադեմիական խմբերի խորհրդատուների, ուսանողների հետ, տեղեկացնում ընդունված որոշումների, տևած հանձնարարությունների մասին՝ դասամատյանների կարգավորում, տեղեկագրերի լրացում և այլն:
10. Հանձնաժողովի անդամներից ոմանք, լինելով նաև բուհ-դպրոց կապն ապահովող հանձնախմբի անդամներ, համալսարանում իրականացվող կրթական, գիտական, լուսավորչական գործընթացների որակի վերաբերյալ մշտապես տեղեկատվություն է տրամադրում արտաքին շահակիցներին:

Կամընտրական դասընթացների ընտրության ուղղությամբ դեկանատի և ամբիոնների ներկայացուցիչների կողմից համապատասխան կուրսերում մշտապես հարցադրումներ կատարվում են և դասավանդվող առարկաների մեջ դրանց տեսակարար կշիռը նախորդող տարիների համեմատությամբ գնալով բարձրանում է, որն էլ իր հերթին նպաստում է կրթության որակի բարձրացմանն ու ուսանողակենտրոն ուսուցմանը:

Հայտնի են ցուցադրությունների արդյունքները. Շատ բաժիններում տնտեսագիտության տեսության ամբիոնի շատ առարկաները չեն ընտրվել:

Չենք իրականացրել նաև նշված խորհրդի վերամշակվող կրթական ծրագրերի քննարկման ժամանակ շահառուներին ներգրավելու հանձնարարականը:

Պատմաաշխարհագրական ֆակուլտետի ուսանողությունը փորձում է ակտիվություն ցուցաբերել նաև միջազգային ծրագրերում: Այսպես 2017-2018 Էրազմուս Մոնդուս IANUS II ծրագրի շրջանակներում «Կառավարում» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Էրիկ Դալլաքյանը մեկ կիսամյակով ուսանել է Ռուսիայի Յասի քաղաքի Ալեքսանդր Իռան Կուզա համալսարանում:

Հարկ է նաև նշել, որ պատմաաշխարհագրական ֆակուլտետի որոշ դասախոսներ մասնակցելով բուհի կողմից կազմակերպվող օտար լեզվի դասընթացներին, պատրաստվում են 2018-2019 ուս.

տարում դասավանդել նաև օտար լեզվով: Ներկայումս օտար լեզվի վերապատրաստման նման դասընթացների մասնակցում են պատմության ամբիոնի դասախոս պ.գ.թ. դոցենտ Մ. Բրուտյանը և փիլիսոփայության ու քաղաքագիտության ամբիոնի դասախոս, ի.գ.թ., դոցենտ Զ. Ղազարյանը:

Անկախ ցանկացած ուղղությամբ ինքնավերլուծության և ուսումնասիրության արդյունքից՝ դեկանատը և ամբիոնները պետք է աշխատանքներ կատարեն մի շարք ուղղություններով առաջընթաց ապահովելու համար: Դրանցից կարող ենք նշել.

- Արտաքին կապերի ընդլայնում
- Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում
- Գործատուների հետ հարաբերությունների աշխուժացում և ընդլայնում:

Պատմաաշխարհագրական ֆակուլտետի 2015-2018 թթ. ռազմավարական պլանով մինչև 2018թ. նախատեսված գործընթացների մի մասը հաջողությամբ, եթե կարելի է ասել, ավարտել ենք: Այսպես.

- Մասնագիտական կրթական ծրագրերի կազմում և վերանայում (այս գործընթացը կրում է շարունակական բնույթ)
- Կրթական ծրագրերի համալսարանականացման գործընթացի ամփոփում:

Արձանագրվել են մի շարք թույլ կողմեր, որոնք բարելավման անհրաժեշտություն ունեն: Դրանց մի մասը ամբիոնները կարող են մոտ ապագայում հաղթահարել և պարտավոր են դա անել: Մի մասն ունեն որոշակի դժվարություններ, մի մասն էլ սուբյեկտիվորեն կապում են համալսարանի ռեսուրսների սղության հետ: Օրինակ՝ մայրենի լեզվով գրականության պակասը: Մեր խոր համոզմամբ՝ այդ և նմանատիպ խնդիրները կարող են լուծվել համապատասխան պահանջարկի առկայության դեպքում, ինչպես որ սովորաբար լինում է:

Ինչպես համալսարանի, այնպես էլ պատմաաշխարհագրական ֆակուլտետի ռազմավարությունների կարևոր բաժին է սոցիալ-դաստիարակչական և ռազմահայրենասիրական գործունեության զարգացման պլանը:

Նախօրոք պլանավորված է եղել իրականացնելու մի շարք միջոցառումներ և գործառնություններ ֆակուլտետի բոլոր ստորաբաժանանումների և ուսանողության ուժերով: Դրանցից, թեևս, կարևորներից մեկը ուսանողակենտրոն միջավայրի ստեղծումն է ու ուսանողակենտրոն ուսուցմանը նպաստող միջոցառումներն են, որոնք համալսարանի նկատմամբ վստահություն են ձևավորում, նպաստում սեփական անձի ինքնադրսևորմանը: Այս և ռազմահայրենասիրական դաստիարակչության ուղղությամբ ամբիոնների կողմից կատարվող աշխատանքը բավարար համարել չի կարելի: Աշխատանքների հիմնական կատարողները մշակույթի բաժինն ու ֆակուլտետի ուսանողական խորհուրդն են: Ռեկտորի առաջարկությամբ ամբիոնները պետք է նշանավոր մասնագետներ հրավիրելին, ինչը մասամբ իրականացրել է միայն փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնը՝ հրավիրելով ԶԳ պետական գործիչ, ի. գ. թ., ԶԳ Արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբելյանին և «ADR partners» կազմակերպության փոխտնօրեն ի.գ.դ., պրոֆեսոր Աիդա Ավանեսյանին:

Ավանդաբար լավ են կազմակերպվում առաջին կուրսեցիներին հետ հանդիպումներ ու ֆակուլտետի օրերը: Այս տարի էլ, նոյեմբերի 8-ին, լավ էր կազմակերպված առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսեցիների ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի հանձնման

արարողությունը, ինչպես նաև հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրսեցիների հետ հանդիպումը և ստուգման գրքույկների ու ուսանողական տոմսերի հանձնման արարողությունը: Ուսանողները ծանոթացան համալսարանի ներքին կարգ ու կանոնին, իրենց պարտականություններին ու իրավունքներին, հանդիպեցին ակադեմիական խմբերի խորհրդատուների հետ:

Պատմաշխարհագրական ֆակուլտետի ռազմավարական պլանին համապատասխան 2018 թ. նախատեսում ենք.

1. Ուսանողակենտրոն ուսուցման ուղղությամբ շարունակել դասավանդման գործընթացում արդիական, առաջատար մեթոդների և ձևերի բարելավմանն ուղղված կոնկրետ աշխատանքների իրականացում(պատասխանատուներ՝ ամբիոններ, ավագ խորհրդատու, ակադեմիական խմբերի ղեկավարներ, ֆակուլտետային ուսխորհուրդ):
2. Ակտիվացնել ֆակուլտետի և շահառուների միջև փոխկապակցության և գործընկերության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը(ղեկանատ, որակի ապահովման հանձնախումբ):
3. Հասնել այն բանին, որ ֆակուլտետի բոլոր ստորաբաժանումներն ու ակադեմիական խմբերի խորհրդատուները լուրջ ուշադրություն դարձնեն, ուսանողների շրջանում համալսարանի նկատմամբ վստահության ձևավորման գործընթացին:
4. Հետևողական աշխատանքներ իրականացնել նախորդ տարիներին որակի ապահովմանն ուղղված, բայց չիրականացված գործընթացների արդյունավետ իրագործման ուղղությամբ
5. Փնտրել հնարավորություններ կրթական և աշխատանքային հաջողությունների խթանման և խրախուսման միջոցների բարելավման ուղղությամբ:
6. Ուժեղացնել համագործակցությունը համալսարանի Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի և համապատասխան ստորաբաժանման հետ՝ ֆակուլտետի դասախոսների և ուսանողությանն արտաքին կապերի և համագործակցության ուժեղացման համար(ամբիոններ, Որակի ապահովման հանձնախումբ):

Պատմաշխարհագրական ֆակուլտետի ղեկանի պաշտոնակատար՝

Լ.Ս.Կոստանդյան